

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՍԵՐ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.01.2011 - 31.12.2011 թ.

Համայնքի ղեկավար՝

Զ.Խ.Հարությունյան

Հաշվետու ժամանակաշրջանում, ճիշտ գնահատելով համայնքի իրավիճակը, առավել ուշադրություն են դարձրել համայնքի սոցիալ - տնտեսական խնդիրների, բյուջեի սեփական եկամուտների մուտքերի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներին:

Համայնքի բյուջեի կազմումը, որպես համայնքի զարգացման հիմք՝ լուրջ ուշադրություն են դարձրել եկամտային մուտքերի (գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարի) հավաքագրման խնդիրների կատարման վրա: Ընդ որում ղեկավարվել են եկամտային մուտքերի եռամսակային, կիսամյակային և տարեկան համամասնությունները պահպանելու սկզբունքով:

Հիմք ընդունելով այն, որ բյուջեի մուտքերի հավաքագրումը պայմանավորված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումով, ուղերձով դիմել են ազգաբնակչությանը: Միաժամանակ կազմվել է համայնքի բնակիչների հարկերի հավաքագրման և ապառքների գանձման ժամանակացույց: Հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ներքոհիշյալ թվային ցուցանիշները բնութագրում և փաստում են իմ և կոլեկտիվի համագործակցության աշխատանքի արդյունքները:

Ընդամենը նախատեսվել է եկամուտներ՝ 31 276.6 հազ. դրամ;

Փաստացի կատարվել է՝ 30 442.4 հազ. դրամ կամ 97.3%-ով;

Սեփական եկամուտների գծով 9 890.0 հազ. դրամ;

Փաստացի կատարվել է 9 638.3 հազ. դրամ կամ՝ 97.3%-ով;

Հողի հարկ նախատեսվել է 7 000.0 հազ. դրամ;

Փաստացի կատարվել է 6 203.8 հազ. դրամ կամ 88.6%-ով;

Գույքահարկ նախատեսվել է 1 500.0 հազ. դրամ;

Փաստացի կատարվել է 1 748.1 հազ. դրամ կամ 116.5%-ով:

Որպես ղեկավար, լինելով բյուջեի տնօրինման և վերահսկման պատասխանատու, բյուջեի ծախսային մասը հաշվետու

Ժամանակաշրջանում նպատակաուղղել են հետևյալ խնդիրների լուծմանը՝

Ծախսային մասը ընդամենը՝ նախատեսվել է 33 666.1 հազ. դրամ;

Փաստացի կատարվել է՝ 31 253.7 հազ. դրամ. որից վճարվել է աշխատողների աշխատավարձ՝ 16895.9 հազ. դրամ;

Փոխանցվել է համապատասխան սոց. վճարներ՝ 3 107.2 հազ. դրամ;

Համայնքի բնակիչներին տրվել է դրամական օգնություն 1090.0 հազ. դրամ;

Համայնքի բնակիչներին տրվել է հուղարկավորության նպաստներ 410.0 հազ. դրամ;

1. Գրասենյակային և այլ ծառայողակա ծախսեր՝ 3 600 հազ. դրամ:

Լուրջ ուշադրություն են դարձրել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների խնդիրների լուծմանը: Համայնքի տարածքում կազմակերպվել են սաննաքրման և աղբահեռացման աշխատանքներ:

Կատարվել է գյուղամիջյան ճանապարհների փոսալցում ավազով և խճաքարերով, հարթեցում:

Կատարվել է 1104.1 հազ. դրամի ներդրում Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձանի ցանկապատի վերանորոգման, Ղարաբաղի ազատամարտում զոհվածների հիշատակին նվիրված խաչքարի տեղադրման աշխատանքների համար: Համայնքում տեղադրվել է Ղարաբաղի ազատամարտում զոհված երիտասարդ Վարսերցի Վահան Խաչիկի Աղամալյանի կիսանդրին, որն իրականացվել է Իմ նախաձեռնությամբ և համայնքի ազգաբնակչության մասնակցությամբ:

Համայնքում գործող մանկապարտեզին սննդի համար հատկացվել է 500.0 հազ. դրամ:

Կատարվել է գյուղապետարանի վարչական շենքի առաջին հարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, կառուցվել է սան հանգույց:

Համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացվել է ըստ սահմանված կարգի՝ Սևանի գանձապետական բաժանմունքի միջոցով, առանձին բյուջետային հաշվի համարով:

Որպես պարտադիր լիազորություն հողօգտագործման բնագավառում իրականացրել են վերահսկման աշխատանքներ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման վերաբերյալ՝ հողօգտագործողներից պահանջելով պահպանել հողային օրենսդրության պահանջները:

Հասարակական կարգի պահպանությունը համայնքում ամուր հիմքերի վրա է դրված: Իրավախախտումները հազվադեպ են ի շնորհիվ երիտասարդության շրջանում մշտապես տարվող դաստիարակչական և ռազմահայրենասիրական աշխատանքների:

Քաղաքաշինության բնագավառում սահմանված կարգով վարել են քաղաքաշինական աշխատանքներ: Ներդրվել է 800.0 հազ.դրամ համայնքի ցածի թաղի փողոցի լուսավորման ցանցի վերանորոգման աշխատանքների համար:

Համայնքի տարածքում կանխվել և կասեցվել է ինքնական շինարարությունները:

Գյուղատնտեսության բնագավառում լուրջ աշխատանք է կատարվել գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ուղղությամբ՝ ՀՀ կառավարության կողմից 2011թ. ընթացքում Վարսեր համայնքի հողօգտագործողներին տրամադրվել է գարնանացան գարու և աշնանացան ցորենի սերմացու:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է համայնքի ավագանու 11 նիստեր,որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կանոնակարգը, համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, համայնքի ղեկավարի և աշխատակազմի դրույքաչափերը, կազմավորվել են ժամանակավոր և մշտական հանձնաժողովներ,որոնք մշտական ակտիվ աշխատանքի մեջ են:Քննարկվել է

համայնքի 2011 թ. տարեկան բյուջեում կատարվելիք բոլոր փոփոխությունները և ընդունվել են համապատասխան որոշումներ: Քննարկվել և հաստատվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Որպես համայնքի ղեկավար կայացրել են որոշումներ բազմաթիվ կարևոր խնդիրների վերաբերյալ.

1. Հաստատել են համայնքի ՀԾ պաշտոնների անձնագրերը;
2. Կազմավորել են ՀԾ մրցութային և ատեստավորման հանձնաժողովները;
3. Կազմավորել են սահմանված կարգով հանձնաժողովներ ըստ բնագավառների;
4. Հաստատել են համայնքի ղեկավարի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները;
5. Ընդունել են որոշումներ, որոնք բխում են համայնքի սոցիալ – տնտեսական շահերից:

Աշխատակազմի քարտուղարից մշտապես պահանջել են ժամանակին պատշաճ կերպով վարել գյուղապետարանի գրասենյակային գործունեությունը, ներկայացնել պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ, նախապատրաստել և կազմակերպել համայնքի անդամների ընդունելություններ: